Հավելված
Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր
քաղաքացիական ավիացիայի
գլխավոր վարության պետի

2015 թվականի մայիսի 20-ի

N 114-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԱԵՐՈԴՐՈՄՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Սույն ուղեցույցի նպատակն է ապահովելու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) կողմից Հայաստանի Հանրապետության միջազգային և ներքին օդանավակայանների աերոդրոմների սերտիֆիկացման գործընթացը:

2. Սույն ուղեցույցը սահմանում է <<Հայաստանի Հանրապետության միջազգային և ներքին օդանավակայանների աերոդրոմների սերտիֆիկացման կարգի>> (այսուհետ՝ Կարգ) 4-րդ կետի 1-ին և 7-րդ ենթակետով սահմանված նախնական հայտի ուսումնասիրության, պաշտոնական հայտի գնահատման և գործնական ուսումնասիրությունների (այսուհետ՝ Ուսումնասիրություններ) ընթացակարգը:

1) Ուսումնասիրություններն իրականացվում են Գլխավոր վարչության պետի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից, որը կազմվում է հանձնաժողովի նախագահից և անդամներից: Հանձնաժողովի խմբի առնվազն մեկ անդամ պետք է ունենա անցած լինի վերահսկողություն իրականացնելու համար դասընթացներ, ունենա սերտիֆիկատ և անցնի վերապատրաստման դասընթացներ երեք տարին մեկ անգամ:

2) Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել հրավիրված մասնագետներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի և ՀՀ ՔԱԿ-ի կողմից սահմանված աշխատանքի ընդունման ձեռնարկի. տեսուչների ներգրավման նպատակով ավիացիոն ոլորտի ներկայացուցիչների հետ ստորագրելով փոխըմբռնման հուշագիր կամ նման այլ պայմանավորվածություն: Հանձնաժողովի կազմը սահմանելիս պետք է բացառվի շահերի բախումը՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի:

3. Ուսումնասիրություններն իրականացվում են 30-օրյա ժամկետում՝ երեք փուլով՝

1) Նախնական հայտի ուսումնասիրություն:

2) Պաշտոնական հայտի գնահատում:

3) Գործնական ուսումնասիրություններ:

5. Նախնական հայտի ուսումնասիրությանրի շրջանակներում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում են՝

1) Աերոդրոմի աշխարհագրական դիրքը և օդերևութաբանական պայմանները՝ կոորդինատները, բարձրությունը, աերոդրոմին կից գոտիները (բնական և արհեստական խոչընդոտները), աերոդրոմի շրջանի եղանակային պայմանները, այդ թվում քամու գերակշռող ուղությունները, առավելագույն ջերմաստիճանը:

2) Աերոդրոմի տարրերի (վազքուղի, ղեկուղի, կառամատույց, անվտանգության գոտիներ) ֆիզիկական բնութագրերը՝ երկրաչափական չափերը, ծածկույթի տեսակը և կրողունակությունը:

3) Օդանավերի տիպերը, որոնք նախատեսվում է շահագործել:

4) Մասնագիտացվված կազմակերպության փորձագիտական եզրակացությունը, եթե աերոդրոմը նախատեսվում է սերտիֆիկացնել ԻԿԱՕ-ի I, II կամ III կարգախմբով:

6. Պաշտոնական հայտի գնահատման շրջանակներում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում են՝

1) Հայտին կից ներկայացված փաթեթի (այսուհետ՝ Փաթեթ) ամբողջականությունը:

ա. ուսումնասիրության դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովը շարունակում է գործընթացը սույն կետով սահմանված ընթացակարգով,

բ. բացասական արդյունքի դեպքում կազմվում է անհամապատասխանությունների արձանագրություն և Գլխավոր վարչության պետին ներկայացվում է փաթեթը լրամշակման վերադրաձնելու վերաբերյալ առաջարկություն,

գ. փաթեթը լրամշակման վերադարձնելու դեպքում, սույն կետով սահմանված 30-օրյա ժամկետը հաշվարկվում է լրամշակված փաթեթը Գլխավոր վարչություն ներկայացնելու օրվանից:

2) Կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետի <<դ>> պարբերությունում նշված փաստաթղթերի (<<Աերոդրոմի ձեռնարկ>>, <<Աերոդրոմի վթարափրկարարական և հակահրդեհային անվտանգության միջոցառումների ծրագիր>>, <<Թռիչքների անվտանգության կառավարման համակարգ>>) համապատասխանությունը նույն պարբերությամբ սահմանված պահանջներին:

3) <<Աերոդրոմի ձեռնարկում>> ներկայացված աերոդրոմի տարրերի ֆիզիկական բնութագրերի, աերոդրոմում տեղադրված տեխնիկական համակարգերի և սարքավորումների համապատասխանությունը միջազգային ստանդարտներին և Կարգի պահանջներին:

4) Աերոդրոմում և դրա շրջանում աերոնավիգացիոն սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունների կամ դրանց ստորաբաժինների թույլտվությունները. համաձայն <<Ավիացիայի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև Աերոդրոմ շահագործողի և դրանց միջև կնքված համաձայնագրերը:

5) Եթե աերոդրոմում առկա են անհամապատասխանություններ համաձայն Կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետի /ե/ պարբերության, ապա հանձնաժողովը կարող է պահանջել ապացույցներ թռիչքային և ավիացիոն անվտանգության համազոր մակարդակի ապահովման վերաբերյալ, այդ թվում ռիսկերի սահմանումը և դրանց գնահատումը:

ա/ սույն ենթակետում նշված ապացույցների և ռիսկերի բավարար գնահատման դեպքում հանձնաժողովը կարող է դրանք համարել ընդունելի, որոնց հրապարակումը ՀՀ աերոնավիգացիոն տեղեկատվական ժողովածուի մեջ իրականացվում է Աերոդրոմ շահագործողի կողմից:

7. Պաշտոնական հայտի դրական գնահատման դեպքում կազմվում է արձանագրություն և Գլխավոր վարչության պետի հրամանի նախագիծ <<Աերոդրոմի ձեռնարկը>> հաստատելու մասին:

8. Պաշտոնական հայտի գնահատման բացասական արդյունքի դեպքում կազմվում է արձանագրություն և Գլխավոր վարչության պետի գրությամբ <<Աերոդրոմի ձեռնարկը>> վերադարձվում է լրամշակման:

1) Արձանագրությունում ներկայացվում են <<Աերոդրոմի ձեռնարկի>> և/կամ դրանում ներկայացված տվյալների անհամապատասխանությունը միջազգային ստանդարտներին և/կամ Կարգով սահմանված պահանջներին:

9. Պաշտոնական հայտի գնահատումն իրականացվում է 10 օրյա ժամկետում:

10. Գործնական ուսումնասիրությունների շրջանակներում հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում են՝

1) Աերոդրոմի տարրերի ֆիզիկական բնութագրերը և վիճակը, այդ թվում՝

ա. երկրաչափական չափերը,

բ. ծածկույթի վիճակը,

գ. արհեստական ծածկույթով հատվածների համակցումը գրունտային գոտիների հետ:

2) Աերոդրոմում և դրա շրջանում առկա օդային խոչընդոտները և դրանց ցերեկային ու գիշերային մականշումները:

3) Աերոդրոմի տեսողական միջոցները, այդ թվում՝

ա. քամու ուղղության ցուցիչը(ները),

բ. աերոդրոմի արհեստական ծածկույթով տարրերի մականշումները,

գ. աերոդրոմի լուսաազդանշանային համակարգը (առկայության դեպքում),

դ. աերդրոմի տեղեկատվական նշանները:

4) Աերոդորմի էներգամատակարարման համակարգը:

5) Աերոդրոմի վթարափրկարարական և հրշեջ միջոցները և դրանց համապատասխանությունն աերոդրոմի վթարափրկարարական և հակահրդեհային անվտանգության ապահովման մակարդակին. համաձայն Կարգի 131-րդ կետի:

6) Աերոդրոմի պարսպապատումը և կողմնակի անձանց ու կենդանիների մուտքի աերոդրոմի տարածք բացառմանն ուղղված միջոցառումները:

7) Աերոդրոմի տարրերի շահագործողական վիճակի պահպանման համար նախատեսված միջոցների առկայությունը, այդ թվում վազքուղու ծածկույթի կցորդման գործակիցը չափող միջոցի:

11. Գործնական ուսումնասիրությունների արդյունքները և Աերոդրոմի սերտիֆիկացման վերաբերյալ եզրակացությունը Հանձնաժողովի կողմից ներկայացվում են Գլխավոր վարչության պետին:

12. Հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում մշակվում է Գլխավոր վարչության պետի հրամանի նախագիծ՝ աերոդրոմին սերտիֆիկատ տալու մասին:

13. Հանձնաժողովի բացասական եզրակացության դեպքում սերտիֆիկացման հայտը մերժվում է, որի պատճառների վերաբերյալ Գլխավոր վարչությունը գրավոր տեղեկացնում է աերոդրոմ շահագործողին:

1) Սույն կետում նշված պատճառները մեկամսյա ժամկետում վերացնելու դեպքում աերոդրոմ շահագործողը կարող է կրկին դիմել Գլխավոր վարչություն. գործնական ուսումնասիրություններ անցկացնելու համար:

14. Ուղեցույցի 6-րդ և 10-րդ կետերում նշված ուսումնասիրություններն իրականացվում են NN1, 2, 3, 4, 5 և 6 ձևերով սահմանված հարցաթերթիկներով, որոնք մշակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, <<Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին>> կոնվենցիայի (այսուհետ՝ Չիկագոյի կոնվենցիա) և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) փաստաթղթերով սահմանված չափանիշերին և ստանդարտներին համաձայն և հանդիսանում են սույն ուղեցույցի մաս:

1) Ավիացիոն անվտանգության ապահովմանն ուղղված գործառույթների ուսումնասիրություններն իրականացվում է Գլխավոր վարչության պետի 2012 թվականի մարտի 22-ի N196-Ա հրամանով հաստատված հարցաթերթիկներով:

15. Ուսումնասիրություններն իրականացվում են աերոդրոմ շահագործողի ներկայացուցչի (ների) մասնակցությամբ:

16. Ուսումնասիրությունների ընթացքում առաջացած անհամաձայնությունների դեպքում աերոդրոմ շահագործողի ներկայացուցչի կողմից կարող է ներկայացվել հատուկ կարծիք:

17. Ուսումանսիրությունների ընթացքում Հանձնաժողովն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով՝

1) Հարցաթերթիկներում նշված հարցադրումների առընչությամբ պետք է ձեռք բերվեն օբյեկտիվ ապացույցներ տվյալ միջոցառումի իրականացման մասին:

2) Օբյեկտիվ ապացույցների ձեռք բերումը նշանակում է որոշակի փաստաթղթերի կոնկրետ օրինակների ուսումնասիրություն:

3) Աերոդրոմի աշխատակիցների հետ անցկացվող քննարկումների ընթացքում բանավոր ներկայացված տվյալները չեն կարող համարվել որպես օբյեկտիվ ապացույց:

18. Ուսումնասիրություններն իրականացվում են աշխատանքային խմբի կողմից մշակված և Գլխավոր վարչության պետի հետ համաձայնեցված ժամանակացույցով, որն Ուսումնասիրություններից առնվազն 2 օր առաջ ներկայացվում է աերոդրոմ շահագործողին:

19. Աերոդրոմ շահագործողն ապահովում է Հանձնաժողովի աշխատանքները և տեղաշարժն աերոդրոմի տարածքում: